Պարույր Սևակ

Ինքն իրեն հետ

Քրտնքից խաշված իր հին գլխարկը թեքած աչքերին,
Ինքն իրեն հետ է առնում ու տալիս Մարտիրոս քեռին.
«Ախար, ա՛յ հոգիս, էս ո՞նց կլինի աշխարքի բանը»,-
Ու ջրաղացում տրված օրդերն է կոխում գրպանը:-
Խոսքի օրինակ, ա՛յ, հենց մեր գալում պահեստապետը:
Մինչև որ ձեռքիդ զոմբախ չունենաս՝ չես խոսի հետը:
Շներին կապել ու բաց են թողել էդ տնավերին,
Ինչ է թե երեկ շրջկոմ է ընկել իր քեռու քեռին:
Բայց դե աշխարքըս ո՞ւմն է մնացել, որ դրանց մնա,
Անարդար բանը անոթի շանն էլ, չէ՛, կուլ չի գնա:
Ա՛յ, էսքանն էլ ճիշտ (զույգ փռշտում է Մարտիրոս քեռին,
Եվ դրանից էլ գլխարկն է իջնում, կախվում աչքերին):
Նա - և կոմունի՞ստ: Գիտի-չգիտի մի «ուռռա», «կեցցե»:
Տո՛, ի՛նչ կոմունիստ... Թե դրան վերցնես ու թոնիր գցես,
Վրայից անգամ կոմունիստ մարդու մշահոտ չի գա...
Ա՛յ, ինչ եմ ասել, թողնես՝ ամենքին կպցնի «հակա»:
Դեհ, էլ ո՞ւմ ասեմ, որ քսան տարի էդ մարդու տղան
Ձեռքը չի բռնել ո՛չ մանգաղ, ո՛չ բահ, ո՛չ փոցխ ու եղան.
Կա՛մ հանդապահ է, կա՛մ կալի հսկիչ,- ման գալիս էշխով,
Ուշունց է տալիս - և դրա համար ստանում աշխօր:
Բենզին է տանում տրակտորիստին - ինչ խոսք որ ԳԱԶ-ով,

Մսի մթերման տավարն է հանձնում - էն էլ ի՜նչ նազով:
Բա լսվա՞ծ բան է. չորս - հինգ փութ ցորեն ջաղաց ես տանում,
Նա՝ օրդեր գրում, դրա համար էլ... աշխօր ստանում:
Թե իրեն ասես՝ մի բան չես արել էս քսան տարում,
Կասի՝ ժողովո՛ւրդ, սա մեր կարգերի հիմքերն է փորում:
Թե մեկ էլ ասես, կգոռա՝ բա ո՞նց, պարտիական եմ:
Է՛հ, ի՜նչ դուրս եկավ. նա՝ պարտիական, ես պարտակա՞ն եմ...
Քրտնքից խաշված իր հին գլխարկը թեքած աչքերին,
Ինքն իրեն հետ է առնում ու տալիս Մարտիրոս քեռին:
Չգիտի քեռին, որ այդ նույն պահին իրենց շրջկոմում
Պահեստապետին ու նրա քեռուն պատին են գամում...

15.V.1954թ.
Մոսկվա